«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա ՝ Ազգային արժեքային համակարգի ձևավորումը հայոց պատմության դասերին

Առարկա ՝ *Հայոց պատմություն*

Ուսուցիչ ՝ Արևիկ Կրբաշյան

Դպրոց՝ Գ. Ստարովոյտովային անվ. հ. 177 հիմն. դպրոց

Ղեկավար՝ Արմեն Ղուկասյան

ԵՐԵՎԱՆ – 2023

Բովանդակություն

Ներածություն 3
Գրական ակնարկ 5
Գլուխ 1. Արժեքներ: Ազգային և համամարդկային արժեքների հարաբերակցությունը և կարևորությունը 9
Գլուխ 2 . Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը: Ընտանիք, ազգ, հայրենիք եռամիասնությունը՝ բարձրագույն արժեք 13
Եզրակացություն 17
Գրականության ցանկ 19

Ներածություն

Հետազոտական աշխատանքս կրում է «Արժեքային համակարգի ձևավորումը» վերնագիրը: Թեման ընտրելիս հաշվի եմ առել նրա արդիականությունը և ժամանակակից հասարակության առջև ծառացած մի շարք կարևորագույն խնդիրներ: Ժամանակակից հասարակության համար կարևորագույն խնդիրներից է բարոյական, ազգային հասարակական նորմերի ճիշտ արժևորումը և նոր սերունդների դաստիարակության գործում դրանց կիրառումը:

Յուրաքանչյուր ոք, ով ուսուցչի կոչմամբ մուտք է գործում կրթական միջավայր, ունի իր ուսերին դրված առաքելություն՝ այն է կրթելու և դաստիարակելու հայրենիքին և պետությանը արժանի, պատվախնդիր, բարոյական, ազգային և ավանդական արժեքները համամարդկային արժեքների համադրմամբ առաջնային և բարձր պահող անհատներ:

Ժամանակակից աշխարհում տեղի ունեցող որակական, բովանդակային բազմաթիվ փոփոխություններն իրենց անմիջական գործունեությունն են ունենում անձի ձևավորման, արժեքային համակարգի փոփոխման, սոցիալականացման վրա: Սոցիալական ինստիտուտները երբեմն դժվարանում են իրականացնել իրենց գործառույթները, քանի որ տեղի է ունեցել բարոյամշակութային արժեքների վերաիմաստավորում: Անձի սոցիալականացման տարբեր փուլերի ընթացքում խոր հակասություններ են ստեղծվում համամարդկային և ազգային, հասարակական և անձնային արժեքների միջև: Տարիքային շրջաբաժանմանը զուգընթաց փոփոխվում են բարոյամշակութային արժեքները, որոնք ուղղակիորեն արտահայտվում են անձի աշխարհայացքում, դաստիարակվածության, կրթվածության, զարգացվածության մակարդակում, վարքագծում, հաղորդակցական մոդելներում: Համաշխարհայնացմամբ պայմանավորված հասարակական արժեքների ձևավորման հիմքում ընկած քաղաքական, տնտեսական, մշակութային, կրոնական և այլ գործոններ երբեմն խոչընդոտում են անհատի անձի ներդաշնակ և լիարժեք ձևավորմանը:

Ամեն մի ժողովրդի կյանքում դաստիարակության խարիսխը, մարդկային բանականության հաստատման համար միակ ճշմարիտ ճանապարհը այնպիսի քաղաքացու ձևավորումն է, որն իր մեջ կկրի իր իսկ ազգին հարիր, իր նախնիներից ժառանգած ազգային արժեքները: Անընդհատ վերափոխվող հասարակության պայմաններում փոխվում են անցյալի մշակութային արժեքների բովանդակության և նշանակության մասին մոտեցումներն ու նրանց փոխանցման մեթոդները: Հետևաբար նոր մոտեցումներ մշակելու խնդիր է ծագում, անհրաժեշտություն է առաջանում

յուրացնելու ժամանակակից մշակութային միջավայրը ձևավորող մշակութային ժառանգության բանալիները: Այս հանգամանքն ավելի է բարդացնում ազգային արժեքների պահպանության խնդիրը, որի լուծման հարցը դրված է ինչպես պետության, այնպես էլ յուրաքանչյուր քաղաքացու առջև:

21-րդ դարը հումանիզմի դրսևորման, տեխնիկական առաջընթացի, գիտական ուսումնասիրությունների, տեղեկատվության մեծ հոսքի և զարգացման մի դարաշրջան է, որտեղ ձևավորվում, դաստիարակվում և զարգանում է մերօրյա էթնոկիրը: Ինչպիսի՞ն է ժամանակակից սերունդը, ի՞նչ պահանջմունքներ, հետաքրքրություններ ունի, ինչպիսի՞ արժեհամակարգով է առաջնորդվում: Գաղտնիք չէ, որ յուրաքանչյուր սերունդ ունի իր կատարելատիպը, ըստ որի էլ չափվում են արժեքներն ու նպատակները: Սերունդներն օղակ են անցյալի ու ապագայի միջև և ապահովում են ինչպես տվյալ ժամանակաշրջանին բնորոշ արժեքների հաջորդականությունը, այնպեսէլ՝ փոփոխումը: Լիարժեք էթնոկրի անձի ձևավորման, նրա սոցիալականացման գործընթացը պատմական տարբեր ժամանակներում տարբեր է եղել՝ պայմանավորված տարատեսակ հանգամանքներով և սկսած տվյալ ժամանակին բնորոշ պատմական իրադարձություններով ու ավարտած մարդկային մտածելակերպի բարդ և անկառավարելի փոփոխություններով: Այստեսանկյունից 21-րդ դարն էլ բացառություն չէ: Անկախացման տարիներին Հայաստանին պատուհասած երկրաշարժը, Արցախյան գոյամարտը, սոցիալ-տնտեսական ճգնաժամը և քաղաքական արտաքին ու ներքին բազում գործոններն ունեցան իրենց տխուր հետևանքները՝ պարարտ հող ստեղծելով բացասական տարաբնույթ երևույթների աշխույժ գործունեության համար: Նման մարտահրավերների առկայության պայմաններում երիտասարդ սերնդի՝ նախնիներից ժառանգած արժեհամակարգի մասին մակերեսային գիտելիքների կամ բացարձակ չիմացության հետևանքով ազգային արժեքները հաճախ մղվեցին երկրորդական պլան. Դյուրին և հեշտ ընկալելի դարձան համաշխարհայնացման կործանարար պահանջները: Վերջիններս բացասական ազդեցություն ունեցան երիտասարդ սերնդի ինքնության, կենսակերպի ու արժեհամակարգի վրա: Ի տարբերություն նախորդ դարաշրջանի՝ մերօրյա ազգային առաքինություններից շատերն այլ ընկալում են ձեռք բերել, փոխվել են նաև արժեքային պատկերացումները: Այսինքն՝ էթնոմշակութային առանձնահատկությունները որոշ չափով մղվել են հետին պլան՝ վտանգելով և մշակութային ինքնությունը խոցելի դարձնելով արտաքին տեղեկատվության համար: Վերոնշյալ խնդրի հաղթահարման գործը դրված է նոր սերնդի ուսերին:

Որքան փոփոխական են խնդիրները, այնքան կայուն է դրանք լուծելու անհրաժեշտությունը: Ուստի այս սերունդը տարբերվում է ոչ միայն առաջադիր

խնդիրներով, այլև վերջիններս հաղթահարելու եղանակներով ու արդյունքներով: Հետևաբար, արդի մարտահրավերների պայմաններում պետականության ամրապնդման համար չափազանց կարևոր է ոչ միայն ժամանակակից, քաղաքական-տնտեսական և շուկայական հարաբերություններն ու օրենքներն ընբռնող, այլև ազգային մտածողություն ու հայեցի դաստիարակություն ունեցող սերնդի կերտումը: Այսօրինակ իրավիճակներում անփոխարինելի է սոցիալական տարբեր ինստիտուտների դերակատարությունն ազգային-ավանդական արժեքների պահպանման, փոխանցման գործում: Վերջիններս այն հենասյուներնեն, որոնք ապահովում են մտավոր ներուժով հարուստ սերունդ ունենալու, ազգային և համամարդկային մշակութային արժեքները պահպանել ու և սերնդեսերունդ փոխանցելու, արժեքային կայուն հայացքներ ունեցող, ազգին նվիրված քաղաքացիներ դաստիարակելու, կրթելու գործընթացը: Սոցիալական ինստիտուտների հիմնական նպատակը տիրող մշակութային արժեքների փոխանցումն է: Դրանով երեխան ոչ միայն ձևավորվում ու զարգանում է, այլև հարմարվում է հասարակական կյանքին՝ ձեռք բերելով անհրաժեշտ գիտելիքներ, կարողություններ, հմտություններ, վարքագծային նորմեր, ծանոթանալով և յուրացնելով ազգային և համամարդկային մշակույթը:

Գրական ակնարկ

«Արժեք հասկացությունը կիրառվում է տարբեր նշանակություններով: Միասնական կարծիք այս հասկացության սահմանման վերաբերյալ գոյություն չունի: Գրականության մեջ առանձնացնում են «արժեքե հասկացության առավել քան հարյուր սահմանումներ, որոնցում առաջարկվում են տվյալ խնդրի դիտարկման տարբեր մոտեցումներ և կողմեր: Մեր առջև նպատակ ենք դրել խմբավորել տարբեր տեսություններում անձի արժեքների վերաբերյալ ներկայացվող տեսակետները, ինչը հնարավորություն կտա բացահայտելու արժեքների ձևավորման հիմնական օրինաչափությունները: Մասնագիտական գրականության վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ յուրաքանչյուր հասարակություն, սոցիալական խումբ, հասարակական խմբավորում ստեղծում է իրեն հատուկ ընդհանուր և յուրահատուկ արժեքային համակարգեր և վարքականոններ, որոնք արտահայտում են նրանցում գերակայող հետաքրքրությունները և նպատակները: Այդ հասարակությանը պատկանող մարդը ընդունում է դրանք որպես իր վարքի չափանիշ: Անձնային արժեքը մարդու մասին գիտությունների՝ փիլիսոփայության, հոգեբանության, մանկավարժության, սոցիոլոգիայի և այլ գիտությունների կարևոր խնդիրներից մեկն է: Չնայած որ

արժեքների հոգեբանական սահմանումների մեծամասնությունը հիմնվում են արժեքների և արժեքային կողմնորոշումների փիլիսոփայական և սոցիոլոգիական հայեցակարգերի վրա, անձնային արժեքների հոգեբանական հասկացումը էապես տարբերվում է այլ գիտություններում արժեքների մեկնաբանությունից: Անձի տեսություններում «անձնային արժեքե հասկացությունը մեր կողմից հանգամանորեն վերլուծվել է «Անձնային արժեքե հասկացությունն անձի տեսություններումե հոդվածում : Մոտեցումների և սահմանումների բազմատեսակության մեջ «արժեքե հասկացությունը պայմանականորեն կարելի է բաժանել մի քանի խմբի: Առաջին խմբում ներառված են հասկացություններ, որոնց հեղինակներն արժեքները դիտում են որպես կարծիք, պատկերացում կամ համոզմունք: Որպես այս ուղղության ներկայացուցիչ՝ կարելի է համարել Մ. Ռոկիչին, ով արժեքները համարում է կայուն համոզմունք այն համատեքստում, որ վարքի որոշակի ձևը կամ գոյության վերջնական նպատակը նախընտրելի է անձնային կամ սոցիալական տեսանկյունից : Երկրորդ խմբում կարելի է ներառել այն սահմանումները, որոնց հեղինակները «արժեքըե (կամ «արժեքային կողմնորոշումըե) սահմանում են որպես սոցիալական դիրքորոշումների կամ հետաքրքրությունների տարատեսակ կամ նմանատիպ երևույթ (Մ. Վեբեր, Ա. Զդրավոմիսլով, Դ. Ուզնաձե): Ա. Զդրավոմիսլովի կարծիքով՝ արժեքային կողմնորոշումները անձի դիրքորոշումներն են նյութական և հոգևոր մշակույթի արժեքների նկատմամբ : Կարելի է առանձնացնել սահմանումների մեկ խումբ ևս՝ որպես իմաստ (Դ. Լեոնտև, Ա. Սեռի, Մ. Յանիցկի, Վ. Ֆրանկլ): Հոգեբանական գիտության բնագավառում արժեքների մեկնաբանության բազմազանության մեջ առավել տարածում ունի այն մոտեցումը, որում արժեքը դիտարկվում է որպես հասարակության կենսագործունեության որոշակի արդյունք: Այդ մոտեցումը ցայտունորեն արտահայտված է փիլիսոփաների և սոցիոլոգների գիտական աշխատություններում: Հոգեբանական գիտության բնագավառում անձնային արժեքների հասկացման գերակայող մոտեցումներից մեկը այն է, որ արժեքը դիտվում է որպես պահանջմունքներին և շարժառիթներին համարժեք հասկացություն: Մասնավորապես՝ անձնային արժեքները և իմաստը կենտրոնական տեղ են զբաղեցնում հումանիստական հոգեբանության մեջ: Անձի արժեքային համակարգի ձևավորման և շարժընթացի խնդիրը ընդունված է դիտարկել հոգեկան զարգացման ընդհանուր օրինաչափությունների համատեքստում: Այն անմիջականորեն կապված է տարիքային զարգացման առանձնահատկությունների հետ: Վերլուծելով անձի իմաստային ոլորտի ձևավորման և զարգացման խնդիրը՝ Ա. Սեռին պնդում է, որ այդ գործընթացները արտացոլում են

տարիքային և անձնային զարգացման ընդհանուր օրինաչափությունները: Դ. Լեոնտևը նշում է, որ յուրաքանչյուր անձի զարգացման գործընթաց բնութագրվում է սոցիալական հանրության արժեքների և դրանց փոխակերպումների, այսինքն՝ անձնային արժեքների կերպափոխմամբ : Տվյալ խնդիրը ներկայացվել է հոգեբանության տարբեր դպրոցների և ուղղությունների ներկայացուցիչների կողմից: Ռուսական հոգեբանության մեջ այս խնդրին անդրադառնում են Վ. Ալեքսեևան, Ս. Բուբնովան, Ե. Երմոլենկոն, և ուրիշներ: Որպես անձնային արժեքների ձևավորման նախադրյալներ՝ դիտարկվում են սոցիալականացման առանձնահատկությունները, տարիքային զարգացման փուլերը, երեխայի ինտելեկտուալ զարգացումը, կրթությունը, տեղեկույթը, մակրո- և միկրոմիջավայրի առանձնահատկությունները: Անձի արժեքային համակարգի ձևավորումն իրականանում է մի շարք գործոնների ազդեցությամբ: Այդ գործոններն են ընտանիքը, հասարակությունը, դպրոցը, շրջապատի սոցիալական արժեքները և այլն: Ն. Ժուրավլյովան արժեքային կողմնորոշումների ձևավորման կարևոր նախապայման է համարում վաղ սոցիալականացման պայմանները : Արժեքային համակարգի ձևավորումն անհնար է պատկերացնել հասարակությունից, մարդկանց հետ շփումից զատ: Արժեքային համակարգի ձևավորումն ընթանում է դաստիարակության և կրթության ընթացքում սոցիալական փորձի յուրացման միջոցով: Անձնային արժեքները ձևավորվում են սոցիալականացման ամբողջ ընթացքում: Ժ. Պիաժեն անձի արժեքային կողմնորոշումների զարգացումը կապում է ինտելեկտուալ զարգացման մակարդակի հետ: Նա համարում էր, որ բարոյական դատողությունների ներքնայնացումը երեխաների մոտ տեղի է ունենում զարգացող մտածողական կառուցվածքների և աստիճանաբար ընդլայնվող սոցիալական փորձի փոխազդեցության արդյունքում: Սոցիալական արժեքների և իմաստների յուրացման մեկ այլ կառուցակարգ է նույնականացումը: Վ. Լեոնտևը պնդում է, որ նույնականացման կառուցակարգի հիմնական բաղադրիչն անձի համար նշանակալի արժեքների ապրումն է, իսկ անձի զարգացումն ընթանում է անձնային իմաստների առանձնահատուկ կրկնօրինակման միջոցով (Леонтьев В. Г., 1992, с. 80): Անձն իր զարգացման ընթացքում ներգրավվում է տարբեր փոքր և մեծ խմբերի մեջ: Դրանցից յուրաքանչյուրի կյանքում մասնակցությունն անհատի մեջ ձևավորում է որոշակի բնորոշ գծեր: Նրա անձնային հատկությունները ձևավորվում և զարգանում են կախված որոշակի սոցիալական շերտին, ազգին, էթնիկ խմբին, մասնագիտական կատեգորիային, ընտանիքին և այլ խմբերին պատկանելությունից: Աշխարհի մասին պատկերացումները, բարոյական հայացքները և համոզմունքները, մտածելակերպը և աշխարհայացքը, հետաքրքրությունները,

ձգտումները և արժեքները պայմանավորվում են խմբային գիտակցության առանձնահատկություններով, որում անձը ձևավորվում է և որում ընթանում է նրա առօրյա գործունեությունը: Փոքր սոցիալական խումբը ոչ միայն անձին առաջարկում է որոշակի արժեքներ, այլև ինչ-որ չափով ազդում է անձի վրա՝ ուղղորդելով նրան դեպի այդ արժեքները: Մի կողմից խումբը և դրա առանձին անդամներն են ազդեցություն գործում անձի վրա, մյուս կողմից՝ անձն ինքն է ազդեցություն գործում խմբի մյուս անդամների և ամբողջ խմբի վրա: Հարմարվելով, ինտեգրվելով և անհատականանալով խմբում՝ յուրաքանչյուր անձ, իր հերթին, ազդեցություն է ունենում խմբի, դրա արժեքների, արժեքային կողմնորոշումների և արժեքային դիրքորոշումների վրա :

Գ. Մ. Անդրեևան, որպես արժեքների անհատական համակարգի ձևավորման միջավայրային գործոններ, առանձնացնում է ընտանիքը, դպրոցը, աշխատանքային կոլեկտիվը, որոնք «սոցիալական փորձի միջնորդե են, որոնցում անձը հաղորդակցվում է նորմերի և արժեքների համակարգի հետ [3]: Վ. Աֆանասևը գրում է, որ ընտանիքում և դպրոցում անձի ձևավորման գործընթացը իրականանում է նախ և առաջ «տեղեկատվական ուղիով . անձին ուրիշների կողմից ստացվող համապատասխան տեղեկություն փոխանցելու միջոցով:

Անձի արժեքային համակարգի ձևավորման գործում տեղեկույթի ազդեցության կառուցակարգերն անհրաժեշտ է առավել հանգամանորեն վերլուծել առանձին ուսումնասիրությունների շրջանակներում:

Այսպիսով, ըստ մասնագիտական գրականության վերլուծության արդյունքների, անձնային արժեքների մասին պատկերացումները կարելի է ներկայացնել հինգ խմբով. արժեքը՝ որպես պատկերացում, դիրքորոշում, արժեքը՝ որպես պահանջմունք կամ շարժառիթ, արժեքը՝ որպես իմաստ և որպես հասարակության կենսագործունեության արդյունք: Անձի արժեքային համակարգի ձևավորման և շարժընթացի խնդիրը ընդունված է դիտարկել որպես հոգեկան զարգացման ընդհանուր օրինաչափություն: Այն անմիջականորեն կապված է տարիքային զարգացման առանձնահատկությունների հետ: Այդ գործընթացում հատկապես կարևորվում է ներքնայնացման գործընթացը՝ որպես սոցիալական խմբի արժեքներից անցում դեպի անձնային արժեքները: Արժեքային համակարգի ձևավորման գործում անհրաժեշտ է հաշվի առնել ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ մի շարք գործոններ, որոնց թվում են սոցիալական պայմանները, անձի սոցիալականացման բնութագրիչները, շարժառիթային ոլորտի առանձնահատկությունները և անձնային բնութագրիչները:

Գլուխ 1. Արժեքներ: Ազգային և համամարդկային արժեքների հարաբերակցությունը և կարևորությունը

Արժեքը, աշխարհի յուրահատուկ ընկալումն է, որը ձևավորվում է ոչ միայն ձեռք բերված գիտելիքի և ինֆորմացիայի, այլև սեփական կենսափորձի հիման վրա: Արժեքն ինչ-որ բանի կարևորությունը, նշանակությունը և օգտակարությունն է: Արժեքային համակարգը կատարում է ամենօրյա կողմնորոշման դեր մարդու առարկայական և սոցիալական գործունեության մեջ :

Մշակույթը խիստ կապված է մարդու արժեհամակարգի հետ: Նեղ իմաստով՝ արժեքը մարդու համար իրի, առարկայի կամ երևույթի դրական նշանակությունն է: Արժեքը մարդու վերաբերմունքն արտահայտող ցուցանիշ է, որի կարևոր կատեգորիաներից են՝ հավատն ու սերը:

Անձնական և հասարակական հարաբերություններում հավատալ նշանակում է վստահել:Հավատն ընդհանրապես կապված է մարդու կամքի հետ և մարդու բարոյական կյանքի դրսևորումն է:

Հավատը ծնում է հույս և մղում մարդուն ապրելու, ստեղծելու, արարելու: Հավատը դառնում է կողմնորոշիչ մարդու կյանքի և գործունեության համար: Մարդիկ քանի դեռ ապրում են՝հավատում են, քանի դեռ հավատում են՝ապրում են:

Հավատի ամենազոր ուժի մասին է վկայում Քրիստոսն ինքը, երբ որ անհնարը հնարավոր է համարում հավատացյալների համար. << Ճշմարիտ եմ ասում ձեզ,եթե մանանեխի հատիկի չափ հավատ ունենաք,այս լեռանը կասեք՝ տեղափոխվի, և որևէ բան ձեզ համար անհնարին չի լինի>>:

Սերը մյուս մարդկանց հետ միավորվելու ձգտումն է: Սիրո մեջ միավորվում են մարդու արժեքային պատկերացումները: Այն բաղկացած է մի քանի մակարդակներից: Այլասիրությունը ուրիշին սիրելու, իսկ եսասիրությունը սեփական անձը սիրելու երևույթն է:

Նաև կան սիրո առանձնացված դրսևորումներ: Օրինակ սերը անհավասարների միջև, երբ միայն տալիս ես՝ առանց վերադարձի ակնկալիքի: Սիրո այդ ձևն անվանում են մայրական:

Հաջորդը սերն է հավասարների միջև, երբ ինչքան տալիս, նույնքան ստանում ես: Օրինակ՝ եղբայրական սերը:

Հովհաննես առաքյալն ասում է <<Ով չի սիրում իր եղբորը,որին տեսնում է,ինչպես կարող է սիրել աստծուն , որին չի տեսել>>: Ապա ավելացնում է <<Սիրո մեջ երկյուղ

չկա և կատարյալ սերը հեռու է վանում երկյուղը,որովհետև երկյուղը տանջանքի ենթակա է,և ով երկնչում է,կատարյալ չէ սիրո մեջ>>:

Հաճախ արժեք է համարվում ճշմարտությունը, հատկապես բարուև գեղեցիկի հետ կապվելիս: Ինչպես ասում է Վիլյամ Սարոյանը <<Բարին երբեք չի մահանում:Եթե մահանար,աշխարհում մարդիկ գոյություն չէին ունենա,ոչ մի տեղ կյանք չէր լինի>>:

Այստեղ տեղին է հիշել նաև Ձիվանու խոսքերը. <<Բարի, գեղեցիկ, առաքինի ընկերը մարդու,փայլեցնում է արևի պես պատկերը մարդու>>:

Ճշմարտությունը միայն որոշակի սոցիալ-մշակութային պայմաններում է ձեռք բերում արժեքային նշանակություն, իսկ գոյաբանական և իմացաբանական իմաստներով ըմբռնված ճշմարտությունը արժեքաբանորեն չեզոք են: Կյանքում հաճախ ճշմարտությունը զոհաբերվում է արժեքներին: Արժեքները բավարարում են սուբյեկտի կենսական պահանջմունքները և իմաստավորում են կյանքը: Անձի մասին կարելի է դատել նրան առավել բնորոշ արժեքներով, որոնք գոյացնում են անձի ներաշխարհը: Իսկ ինչ վերաբերում է ազգային արժեքներին, դրանք բախտորոշ նշանակություն ունեն և ձևավորվում են պատմական զարգացման ընթացքում, կազմում ներկա կեցության հիմքը և բնականոն գոյության ու անխափան զարգացման երաշխիքը: Ազգին հատուկ արժեքներն արտացոլվում են նրա ինքնագիտակցությանը տարբեր ձևերում՝ արվեստի, փիլիսոփայության, բարոյականության, կրոնական պատկերացումների բանահյուսության մեջ: Ազգի արժեհամակարգը պետք է ուրացնի յուրաքանչյուր անհատ հանրության մեջ բնականոն գործելու համար:

Այսպիսով անհրաժեշտ է տարբերակել արժեք-միջոց և արժեք-նպատակ հասկացողությունները. Օրինակ՝<<հիշխանությունը>>, մի բան է որպես միջոց, մեկ այլ բան որպես `նպատակ, նմանապես փողը և փառքը: Երբ իշխանությունը, փողն ու փառքը դառնում են անձի գերագույն արժեք, դա հիվանդագին և ախտածին երևույթ է, մինչ դեռ որպես միջոց դրանք համարվում են կյանքի ընդունելի ու անհրաժեշտ տարրեր:

Արժեքները ընդհանուր համոզմունքներ են,որ անհատն ունի այն ցանկալի նպատակների վերաբերյալ, որոնց պետք է ձգտել կյանքում: Դրանք գործողության շարժառիթ են և նաև ծառայում են որպես ուղենիշային սկզբունքներ՝ որոշելիս, թե ինչպես գործել: Արժեքների ավելին են, քան կոնկրետ գործողությունները և համատեքստերը, և դրանք ունեն նորմատիվ հրահանգավորման բնույթ՝ ներկայացնելով, թե ինչ է պետք անել կամ մտածել բազմաթիվ տարբեր իրավիճակներում:Արժեքները չափանիշներ կամ չափորոշիչներ են առաջարկում այլոց գործողությունները գնահատելու, կարծիքները , մոտեցումներն ու վարքը

հիմնավորելու, այլընտրանքներից որևէ մեկն ընտրելու, վարքագիծը պլանավորելու և այլոց վրա ազդելու համար:

Առանձնացնենք նաև արժեք-արժանիքները, որոնք անձի համար ոչ միայն կենսականորեն անհրաժեշտ բարիք են, այլ նաև ցանկալի հատկություն: Արժեք-արժանիքների ըմբռնումը կարևոր է <<անհատ-ազգ>> փոխհարաբերությունների կարգավորման առումով: Բոլոր անձնային հատկությունները հանդիսանում են տվյալ անձի արժանիքները, մասնավորապես <<հաստատակամություն>>, <<աշխատասիրություն>>, <<համբերատարություն>> և այլն: Պետք է տարբերակել ազգային արժանիքներ հասկացողությունը, որում առանձնանում է ազգային-պետական միաբանության ապահովումը: Միաբանության ապահովման մեջ վճռորոշ դեր են խաղում երեք հիմնական արժեք-արժանիքներ `արժանապատվություն, արդարամտություն, աշխատասիրություն:

Արժանապատվությունը սեփական <<Ես>>- ի արժեքի գիտակցումն է: Դա անձի վարքի, արարքների, իրավունքների գնահատականն է, անձի ինքնագնահատականը:

Ազգային արժանապատվությունը սեփական ազգի արժանիքների, վաստակի, իրավունքների գիտակցումն է, ինքնահարգանքը `որպես ազգի ներկայացուցիչ:

Արդարամտությունը այլոց ճշմարիտ, արդարացի գնահատումն է: Եթե արժանապատվությունը անձի հարգանքն է իր հանդեպ, ապաարդարադատությունը հարգանքն է ուրիշների հանդեպ: Այսպիսով արդարամտությունը ոչ միայն անդրադառնում է մեր սեփական ինքնագնահատականի վրա, այլ նաև ազդում է դրա վրա:

Աշխատասիրությունը աշխատանքի հանդեպ անձի դրական վերաբերմունքն է: Այն բացառիկ կարևորություն ունի և առաջընթացի գլխավոր նախադրյալն է: Վերը նշված արժեք-արժանիքները խիստ փոխկապակցված են և դրանցից յուրաքանչյուրի բացակայությունը հանգեցնում է որևէ էական խնդրի առաջացման:

Յուրաքանչյուր ազգի կայունության և անկախության կարևոր երաշխիքն է ճիշտ ազգային արժեքային համակարգի ստեղծումն և պահպանումն է:

Ազգային արժեքային համակարգի գլխավոր նպատակը կայացած անհատներ դաստիարակելն է:

Արժեքների մի մեծ խումբ հիմնված է այն ընդհանուր համոզմունքի վրա , որ բոլոր անհատներն ունեն հավասար արժեք ու հավասար արժանապատվություն , հավասար հարգանքի արժանանալու և մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների նույն շարքից օգտվելու իրավունք , և պետք է համապատասխան վերաբերմունքի արժանանան: Այս համոզմունքը ենթադրում է, որ մարդու

իրավունքները համամարդկային են, անօտարելի ու անբաժանելի և առանց տարբերակման տարածվում են բոլորի վրա . մարդու իրավունքներն ապահովում է պաշտպանությունների նվազագույն շեմ,որը շատ կարևոր է մարդկանց՝ արժանապատիվ կյանքով ապրելու համար, և մարդու իրավունքներն աշխարհում ապահովում են ազատության , հավասարության , արդարության և խաղաղության այս առանցքային հիմքը:

Արժեքների հաջորդ այլ խումբ հիմնված է այն ընդհանուր համոզմունքի վրա, որ հարկ է դրական վերաբերվել, գնահատել ու փայփայել այլ մշակութային պատկանելիություններին, մշակութային փոփոխականությանն ու բազմազանությանը և տեսակետների, կարծիքների ու գործելակերպի բազմազանությանը: Այս համոզմունքը ենթադրում է , որ մշակութային բազմազանությունը կարևոր արժեք է հասարակության համար , մարդիկ կարող են սովորել և օգուտ քաղել այլոց բազմակարծությունից, մշակութային բազմազանությունը պետք է խթանել և պաշտպանել, պետք է ոգևորել մարդկանց, որ շփվեն միմյանց հետ՝ անկախ մշակութային տարբերությունների մասին իրենց ընկալումներից, իսկ միջմշակութային երկխոսությունից պետք է օգտվել հասարակության մեջ որպես հավասարների՝ միասին ապրելու ու ժողովրդավարական մշակույթը զարգացնելու համար:

Արժեքների մեկ այլ խումբ հիմնված է մի խումբ համոզմունքների վրա առ այն , թե հասարակություններն ինչպես պետք է գործեն և կառավարեն ներառյալ այն համոզմունքները, որ բոլոր քաղաքացիները պարտադիր պետք է հնարավորություն ունենան հավասար կերպով մասնակցելու հասարակությունը կարգավորող օրենքների սահմանման և ստեղծման ընթացակարգին: Բոլոր քաղաքացիները հասարակության ներսում պետք է ակտիվորեն մասնակցեն ժողովրդավարական գործընթացներին, թեև որոշումները պետք է կայացվեն մեծամասնության կողմից, սակայն նաև պետք է ապահովվել արդարացի և հավասար վերաբերմունք բոլոր տեսակի փոքրամասնությունների նկատմամբ, սոցիալական արդարությունը, անկողմնակալությունը և հավասարությունը պետք է աշխատեն հասարակության բոլոր մակարդակներում:

Այսպիսով պետք է հաշվի առնել, որ մշակույթն ու արժեքը չեն նույնանում, բայց և այնպես մշակույթում ստեղծված լավագույն հատկանիշը արժեքն է: Այն անհատներն ու ազգերը, որոնք ապրում են արժեքների գերակայությամբ բարձր ոգեղեն հատկանիշներով ապրող ազգեր և անհատներեն, իսկ երբ նվազում են արժեքները վրա է հասնում ոգու սովը: Ոգեղենությունը պետք է հատուկ լինի բոլորին, հատկապես՝մտավորականությանը, որը համարվում է ազգի ինտելեկտուալ խիղճը:

Ամփոփելով արժեքների ուսումնասիրման տարաբնույթ ասպեկտները մենք տեսնում ենք , որ արժեքների հայեցակարգի վրա հիմնված հետազոտությունները կարող են վերաբերվել մարդկային կյանքի տարբեր ոլորտների: Արժեքները առանցքային են մարդկային մտքի , զգացմունքների և վարքագծի մեջ: Դրանք մշակույթի անքակտելի մաս են կազմում , և , հետևաբար արժեքների միջմշակութային հետազոտությունները թույլ են տալիս հասկանալ մշակութային տվյալ ժամանակաշրջանի բնորոշ խնդիրները: Տարբեր տեսաբաններ օգտագործում են տարբեր մշակութային չափումներ ՝ ինդիվիդուալիզմ-կոլեկտիվիզմ, ֆեմինինություն-մասկուլինություն, ներդաշնակություն, հավասարություն և այլն, որոնց բազմազանությունը թույլ է տալիս վեր հանել արժեքներով պայմանավորված հասարակական առանձնահատկությունների ամբողջ համախումբը:

Գլուխ 2 . Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը: Ընտանիք, ազգ, հայրենիք եռամիասնությունը՝ բարձրագույն արժեք

Յուրաքանչյուր անձի արժեքային համակարգի ձևավորման հիմքում դրվում է ճշմարտությունը և սեր: Ի սկզբանե երեխայի մեջ պետք է սերմանել սեր հայրենիքի և ազգի նկատմամբ, իսկ ժամանակի ընթացքում այդ սերը պետք է մեծացնել և ավելացնել:

Անձի մասին կարելի է դատել նրան առավել բնորոշ արժեքներով, որոնք գոյացնում են անձի ներաշխարհը: Իսկ ինչ վերաբերվում է ազգային արժեքներին , դրանք բախտորոշ նշանակություն ունեն և ձևավորվում են պատմական զարգացման ընթացքում, կազմում ներկա կեցության հիմքը և բնականոն գոյության և անխափան զարգացման երաշխիքը:

Ժամանակակից աշխարհում տեղի ունեցող որակական և բովանդակային բազմաթիվ փոփոխություններ կարծես մարտահրավերներ են ստեղծում արժեքային համակարգում՝ կշեռքի մի նժարին դնելով ազգային ավանդական արժեքները, մյուսին՝ համամարդկային արժեքները:

Նման մարտահրավերների առկայության պայմաններում երիտասարդ սերնդի՝ նախնիներից ժառանգած արժեհամակարգի մասին մակերեսային գիտելիքների կամ բացարձակ չիմացության հետևանքով ազգային արժեքները հաճախ մղվում են երկրորդական պլան. դյուրին և հեշտ են դառնում համաշխարհայնացման կործանարար պահանջները: Վերջիններս, բացասական ազդեցություն են ունենում երիտասարդ սերնդի ինքնության, կենսակերպի և արժեհամակարգի վրա: Ի տարբերություն նախորդ ժամանակաշրջանի մերօրյա

ազգային առաքինություններից շատերն այլ ընկալում են ձեռք բերել, փոխվել են նաև արժեքային պատկերացումները: Ազգային և էթնոմշակութային առանձնահատկությունները որոշ չափով մղվել են հետին պլան, վտանգելով և մշակութային ինքնությունը խոցելի դարձնելով արտաքին տեղեկատվության համար:

Հետևաբար արդի մարտահրավերների պայմաններում պետության ամրապնդման համար չափազանց կարևոր է ոչ միայն ժամանակակից քաղաքական և տնտեսական հարաբերություններն ու օրենքներն ընմբռնող , այլև ազգային մտածողություն և հայեցի դաստիարակություն ունեցող սերնդի կերտումը:

Ահա այսպիսի բարդ իրավիճակում պետք է կարողանանք ճիշտ իրականացնել երեխաների կրթությունը և դաստիարակությունը: Ուստի սահմանելով որոշ սկզբունքներ , առաջ շարժվենք ըստ այդմ՝ առանցքային դերում պահպանելով ազգային արժեքների գերագույն դերը համամարդկային արժեքների համատեքստում:

21-րդ դարը հումանիզմի դրսևորման, տեխնիկական առաջընթացի, գիտական ուսումնասիրությունների, տեղեկատվական մեծ հոսքի և զարգացման մի դարաշրջան է, որտեղ ձևավորվում, դաստիարակվում և զարգանում է մեր օրյա էթնոկիրը:

Ահա, ելնելով այս համատեքստից առաջ եմ քաշում հետևյալ հարցադրումները՝

Արդյո՞ք ընտանիքը դիտարկվում է որպես ազգային արժեք, որքանո՞վ է մեծ դրա կարևորությունը երեխայի դաստիարակության գործում:

Ինչպիսի՞ն է ժամանակակից սերունդը, ի՞նչ պահանջմունքներ և հետաքրքրություններ ունի, ինչպիսի՞ արժեհամակարգով է առաջնորդվում.

Ելնելով նոր ժամանակների մարտահրավերներից՝ ինչպե՞ս պետք է իրականացնել կրթությունը դպրոցում, որպեսզի և՛ համամարդկային և՛ ազգային արժեքները ճիշտ յուրացվեն ներկա սերնդի կողմից, ինչպես նաև կարողանան այդ արժեքները փոխանցել ապագա սերունդներին:

Սոցիալական ինստիտուտների մեջ անգնահատելի է ընտանիքի դերը `որպես մարդկության կողմից պատմական երկարատև զարգացման ընթացքում ստեղծված մեծագույն արժեք: Ընտանիքը ոչ միայն տվյալ ժամանակաշրջանի մշակույթի կրողն է, այլև փոխանցողը: Ներ ընտանեկան ավանդույթներն ու սովորույթներն օգնում են հայեցի դաստիարակություն տալ գալիք սերունդներին `նրանց մեջ ձևավորելով ազգային ինքնագիտակցության ոգի: Ինքնության հարցը ներընտանեկան միջանձնային փոխհարաբերություններում դրսևորվում է հենց ազգային ինքնագիտակցության, մայրենի լեզվին տիրապետելու, պապենական արմատները ճանաչելու, Հայ առաքելական եկեղեցու պատկանելության և ազգային սովորույթների պահպանման գործընթացներում: Ընտանիքում է երեխան առաջին անգամ հաղորդակցվում

մշակութային արժեքներին, յուրացնում հասարակական վարքագծային նորմեր, կանոններ, իրականացվում երեխայի առաջնային սոցիալականացումը, հարմարումը կյանքին: Գաղտնիք չէ, որ յուրաքանչյուր ժամանակաշրջան առանձնանում է իր սերնդին բնորոշ առանձնահատկություններով, նախասիրություններով, կողմնորոշումներով, և ավագ սերնդի կողմից ընդունված հասարակական կյանքի որոշ նորմեր կարող են տարբերվել հաջորդ սերնդի հայացքներից: Վերջիններս արագ հարմարվում են նոր իրավիճակին՝ ձևավորելով արժեքային նոր համակարգ, որը արմատապես կարող է տարբերվել նախորդից: Ինչ խոսք, հասարակությունը չի կարող զարգանալ միայն պահպանողականության հիմքի վրա, քանի որ անընդհատ գալիս է նորը՝ համալրելով եղած արժեքները: Պարզապես քայլելով ժամանակին համընթաց, հաղորդակից լինելով համամարդկային արժեքներին՝ անհրաժեշտ է առաջնայնությունը տալ ազգայինին:

Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի նաև հայ դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ: Այս նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ու կատարելագործել ոչ միայն հայրենի և համաշխարհային գիտությունների ճյուղերը, այլև մանկավարժության անցյալ ժառանգությունն ու նրա ժամանակակից փորձն ու մեթոդաբանությունը: Պատահական չէ արևմտահայ մանկավարժ Նիկողայոս Զորայանի մտահոգությունը, թե «ինչու համար դաստիարակութիւնը չիյաջողիլ ազգին մէջ, կամ ինչ ընելուէ, որ ազգային դպրոցներն առաջ երթանե : Եվ ինքն էլ պատասխանում է իր հարցադրմանը՝ առաջարկելով վերակառուցել դպրոցը՝ մոտեցնելով այն ազգային ակունքներին, բարձրացնելով հասարակության կենսամակարդակը և դպրոցները համալրելով մասնագիտական բարձր ունակություններ ունեցող մանկավարժ-դաստիարակներով: Հետևապես, ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է: Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից, և որը մեր անխառն ինքնատիպությունն է համաշխարհային մշակույթի բազմերանգության ու բազմազանության մեջ: Այս խնդրում որպես գործիքակազմ մեծ դերակատարություն ու ժողովրդական բանահյուսությունը՝ իր ժանրային բազմազանությամբ, որը կարող է երիտասարդ սերնդի ազգային ինքնության, բարոյական դաստիարակության գործընթացը դարձնել առավել արդյունավետ՝ հաշվի առնելով նրա ունեցած բարոյադաստիարակչական մեծագույն արժեքը: Ուստի 21-րդ դարի դպրոցում դաստիարակության և կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման

համար շատ կարևոր են ոչ միայն համամարդկային, այլև հայրենի մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունների ուսումնասիրումն ու ուսուցումը: Այդ ստեղծագործություններում արտահայտված են մեր ժողովրդի հոգեկերտվածքը, աշխարհընկալումը, մարդասիրական գաղափարներն ու գալիքի երազանքները:

Հայ ժողովրդի ավանդույթներում է, որ վառ կերպով արտացոլված են մեր ազգի ազգային հավաքական բնույթը, անդրդվելի կամքը, ներքին զորությունն ու հնարավորությունները, ապրելու, վերածնվելու և հարատևելու ունակությունը, ազգերի պատմության մեջ իր արժանի տեղն ունենալու ձգտումը: Այս ամենն է, որ անհրաժեշտ է ավանդել ժամանակակից էթնոկրին: Այդպես նա պիտի հասնի այն գիտակցության, որ հասարակական կյանքի առաջընթացը պայմանավորված է համախմբվածությամբ, գիտելիքների բարձր մակարդակով ու մշակութային արժեքների ոչ միայն ստեղծմամբ, այլև պահպանմամբ: Սերունդ, որը կկարողանա շարունակել ազգային լավագույն ավանդույթները, աշխարհին ու մարդկությանը ցույց տալ իր մշակութային հարստությունն ու բարոյահոգեբանական արժանիքները: Մշակույթ՝որը հսկայական դեր է խաղացել մեր ժողովրդի պատմության մեջ:Այն շարունակական ձևով ստեղծվել ու զարգացել է որպես մեկ միասնական ամբողջություն:

Հայ հոգևոր-ազգային կրթությունը, գիտությունը, գրականությունը, արվեստը հասարակական կյանքի կազմակերպման ձևերը մշտապես նպաստել են, որպեսզի հայության տարբեր հատվածները թե Հայրենիքում և թե Սփյուռքում իրենց գիտակցեն որպես մեկ ընդհանուր հայկական մշակույթի կրողներ: Երբ որևէ ազգ կամ նրա առանձին խմբեր հայտնվում են օտար երկրում ազգային փոքրամասնության կարգավիճակում, ապա նրանք առաջին հերթին վերարտադրում են այն արժեքներն ու կառույցները, որոնք ազգապաշտպան գործառույթ են կատարում:

Եթե ազգը կորցնում է իր մշակույթը, ապա դրանով իսկ զրկվում է ոչ միայն իր կուտակած դարավոր ժառանգությունից, այլև շրջապատող միջավայրն հարմարվելու, դիմակայելու իր փորձից:

Ուրեմն լինենք պաշտպանն ու պահապանը մեր դարավոր ազգային մշակույթին և հայի գենին վայել արժեհամակարգին:

Եզրակացություն

Յուրաքանչյուր ազգի կայունության և անկախության կարևոր երաշխիքն է ճիշտ ազգային արժեքային համակարգի ստեղծումը և պահպանումը: Ազգային արժեքային համակարգի գլխավոր նպատակը կայացած անհատներ դաստիարակելն է:

Վերջիններս այն հենասյուներն են, որոնք ապահովում են մտավոր ներուժով հարուստ սերունդ ունենալու, ազգային և համամարդկային մշակութային արժեքները պահպանելու և սերնդեսերունդ փոխանցելու, արժեքային կայուն հայացքներ ունեցող, ազգին նվիրված քաղաքացիներ դաստիարակելու, կրթելու գործընթացը:

Երեխան ոչ միայն ձևավորվում ու զարգանում է այլև հարմարվում է հասարակական կյանքին ձեռք բերելով անհրաժեշտ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ, վարքագծային նորմեր, յուրացնելով ազգային և համամարդկային մշակույթը: Ժամանակակից հասարակության կարևոր խնդիրներից է ազգային և համամարդկային արժեքների համադրումն ապահովելը, իհարկե առաջնային դիրքը վերապահելով ազգային արժեքներին: Մյուս տեսանկյունից հասարակությունը չի կարող զարգանալ միայն պահպանողականության հիմքի վրա, քանի որ անընդհատ գալիս է նորը՝ համալրելով եղած արժեքները: Պարզապես քայլելով ժամանակին համընթաց, հաղորդակից լինելով համամարդկային արժեքներին՝ անհրաժեշտ է առաջնայնությունը տալ ազգայինին: Արժեքները առանցքային են մարդկային մտքի, զգացմունքների վարքագծի մեջ:

Ազգային արժեքների մեջ անգնահատելի է ընտանիքի դերը՝ որպես մարդկության կողմից պատմական երկարատև զարգացման ընթացքում ստեղծված մեծագույն արժեք: Ընտանիքը ոչ միայն տվյալ ժամանակաշրջանի մշակույթի կրողն է, այլև փոխանցողը: Ընտանեկան ավանդույթներն ու սովորույթներն օգնում են հայեցի դաստիարակություն տալ երեխային՝ նրա մեջ ձևավորելով ազգային ինքնագիտակցության ոգի: Ոգեղենությունը պետք է հատուկ լինի բոլորին հատկապես՝ մտավորականությանը, որը համարվում է ազգի ինտելեկտուալ խիղճը: Ընտանիքում է երեխան առաջին անգամ հաղորդակցվում մշակութային արժեքներին, յուրացնում հասարակական վարքագծային նորմերը: Երեխան ընտանիքում է ձևավորում ազգային ինքնագիտակցություն, լսում և սովորում մայրենի լեզուն, ճանաչում և

պահպանում պապենական արմատները, Հայ առաքելական եկեղեցու պատկանելությունը և ազգային սովորույթները:

Արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի նաև հայ դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ: Այս նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ու կատարելագործել ոչ միայն հայրենի և համաշխարհային գիտությունների ճյուղերը, այլև մանկավարժության անցյալի ժառանգությունն ու նրա ժամանակակից փորձն ու մեթոդաբանությունը:

Յուրաքանչյուր սերունդ ունի իր կատարելատիպը, ըստ որի էլ չափվում են արժեքները ու նպատակները: Սերունդները օղակ են անցյալի ու ապագայի միջև, և ապահովվում է ինչպես տվյալ ժամանակաշրջանին բնորոշ արժեքների հաջորդականությունը և փոխանցումն հետագա սերունդներին:

Գրականության ցանկ

1. Գևորգյան Ա., Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործում, Երևան 2002թ:
2. Սարգսյան Ա.Հ., Մշակութային տեսություն, Երևան 2003:
3. Երևանի պետական համալսարան,Անձի հոգեբանության տեսական և կիրառական հարցեր,Գիտական հոդվածների ժողովածու, Երևան,2016:
4. Սարգսյան Ա.Ա. Համամարդկային և ազգային արժեքները սոցիալական տարբեր ինստիտուտներում, ԵՊՀ, հոդված, Իջևան, 2019:
5. Հայոց եկեղեցու պատմություն 10-րդ դասարան:Վարդան ԵՊՍ. Նավասարդյան, Վարդան Ղանդիլյան, Արամ Նազարյան:Երևան 2021